

«վերին [հանդա]սահմանի շարիաթ»-ից⁴⁷: Յարդը-Արթիկի պարագայում տեղական տիրակալը հրաժարուել է հարկային ամբողջ տուրքից՝ զիջելով «զամենն»: Սովորաբար՝ արձանագրութիւնների հեղինակները հարկային զիջումը նշում են «թողի», «բարձի» բնութագրումներով, իսկ «սահմանեցի» բայաձևով բացորոշում են իրենց պարտաւորեցնող վճիռները: Ուստի զարմանք է յարուցում «սահմանեցի» ձևակերպումը, որը ճիշտ հասկանալու համար պէտք է դիմել այլ արձանագրութիւնների նիւթին: Ինչպէս երեւում է, նախորդ ժամանակահատուածում Արթիկի բնակիչներին սկսել են չափից աւելի մեծ պահանջներ ներկայացնել, ուստի կարիք է զգացուել սահմանափակելու հարկային պաշտօնեաների ախորժակը: Ճիշտ ինչպէս Անիի արձանագրութիւնում, արդէն մոնղոլական ժամանակաշրջանում քաղաքի պատրոնների կողմից «զամենայն հարկապահանջութիւն բարձուցին»-ը բնութագրւում է «յառաջին սահմանա դարձուցին» արտայայտութեամբ⁴⁸, այնպէս էլ Արթիկում Շահնշահ Ա-ն ընդամէնը վերականգնել է աւանդական հարկաչափը:

Կասկած չկայ, որ վիմագրի վերջին հատուածի վերականգնումները եւս պէտք

է հիմնուեն ժամանակաշրջանի արձանագրութիւնների անէծքի. բանաձևերի քննութեան վրայ: Սակայն խնդիրն այն է, որ Արթիկի արձանագրութեան եզրափակիչ հատուածն իր կատարեալ զուգահեռը չունի անէծքի ու օրհնանքի բանաձևերով հարուստ հայ վիմագրութեան մէջ⁴⁹: Ուստի ուշադրութեան են արժանի արձանագրութիւններից յայտնի այն բնագրական վկայութիւնները, որոնք պարունակում են «կամ նախանձու» արտայայտութիւնը: Դրանցից է Հաղբատի ու Սանահինի միջեւ գտնուող Կայեան բերդի 1233 թ. արձանագրութիւնը, որտեղ նախապայմանը այսպիսին է. «առաջնորդ որէն ի կամս իւրո կամ նախանձու, կամ ծուլութեամբ. կամ կաշառաւ զսայ ի Հաղբատա հանէ...»՝ յաջորդող նզովքի բանաձևով⁵⁰: Սակայն անգամ այս վկայութիւնը վստահելի հիմք չի ընձեռում հաւանական որեւէ ենթադրութիւն անելու, թէ «ութիւն»-ով աւարտուող ի՞նչ բառ է նախորդել գործիական հոլովով դրուած «նախանձ» բառին:

Ամէն ինչից երեւում է, որ արձանագրութեան վերջում փորագրող գրիչը նշել է իր գերզաստանի անուանումը եւ սեփական անձնանունը:

Այսպիսով՝ Արթիկի 1222 թ. արձանագրութեան քննութիւնը թոյլ է տալիս վերականգնել կամ լուսաբանել բնագրի որոշ հատուածներ, ինչպէս նաեւ՝ պարզաբանել Զաքարեանների տոհմի պատմութեան առանձին դրուագներ:

49 Համապատասխան անվանումները հանդիպում են Ս. Յարութիւնեանը, տե՛ս նրա Անէծքի եւ օրհնանքի ժանրը հայ բանահիւսութեան մէջ, Երևան, 1975, էջ 40-86:
50 Դիւան հայ վիմագրութեան, պրակ IX, էջ 240:

47 Տե՛ս Պ. Մուրադեան, Ա. աշխ., էջ 100-101: Արձանագրութեան առաջին հրատարակիչ Ա. Ծանիձեւ այն վերագրել է Իւանէ Ա Աթաբէկին (Տե՛ս Ա. Գ. Շանիձե, *Грузинская надпись XIII века в селе Кож.* - Известия Института рукописей АН Грузинской ССР, I, Тбилиси, 1959, с. 7-19), որին հետեւել է Պ. Մուրադեանը: Սակայն փաստերը վկայում են աւելի ուշ թուագրման օգտին: Մասնատրապէս՝ Կոջի վրացերէն արձանագրութիւնում «մոռացուած» է Իւանէ Ա-ի միակ որդի Աւագը, մինչդեռ յիշատակուում են Իւանէ Բ-ի որդիները՝ Ծանիձեւ Բ-ն եւ իր եղբայրները, որոնք յայտնի են բազմաթիւ այլ սկզբնաղբիւրներից: Բացի այդ, վիմագրի հեղինակն իրեն կոչում է մանդատորութիւն, իսկ Իւանէ Ա-ն երբեք չի վարել այդ պաշտօնը: Փոխարէնը՝ Իւանէ Բ-ն իր քոք երկար տարիներ Արեւելալրացական թագաւորութեան մանդատորութիւնը եր:
48 Դիւան հայ վիմագրութեան, պրակ I, էջ 1:

ՀԵԹՈՒՄ ԿՈՒԻԿՈՍՑՈՒ «La Fleur des Histoires de la terre d'Orient»
ԵՐԿԻ ԳՐԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Լիանա Դալլաքեան

«Ծաղիկ պատմութեան Արեւելից աշխարհի» «La Fleur des Histoires de la terre d'Orient», երկը գրուել է Հոռմի Կղեմէս է. պապի (1305-1314) պատուէրով 1307 թ.: Որպէս Կիպրոսի կառավարչի դեսպան Կղեմէս է. պապի ընդունելութեանն արժանացած Հեթում Կոռիկոսցին նրա կողմից յանձնարարութիւն է ստացել գրելու Արեւելքի երկրների մասին մի գործ: Յրանսիայի Պուատիէ քաղաքի վանքում Հեթումն իր պատմութիւնը բերանացի պատմել է Նիկոլաս Ֆալկոն անունով վանականին, որն էլ շարագրել է երկը միջին ֆրանսերէնով, ապա՝ թարգմանել լատիներէն:

Ուսումնասիրելով լատիներէն թարգմանութիւնը՝ համոզուում ենք, որ Հեթում Պատմիչը տեղում խմբագրել է այն եւ կատարել աւելացումներ, որոշակի ճշգրտումներ: Դրանից յետոյ նա երկն անձամբ ներկայացրել է պապին: Գրքի ստեղծման պատմութեանը մենք անդրադարձել ենք առանձին յօդուածով¹:

Հեթում Կոռիկոսցու երկը դեռեւս միջնադարում մեծ հետաքրքրութիւն է առաջացրել եւ թարգմանուել է եւրոպական բազմաթիւ լեզուներով², սակայն, մինչեւ օրս գոյութիւն չունի ամբողջական հայերէն թարգմանութիւն: «Ծաղիկ պատմութեանցը» հայերէն՝ գրաբար, թարգմանուել է միայն ԺԹ. դարում Մխիթարեան միաբանութեան վարդապետ Հ. Մկրտիչ Աւզերեանի կողմից՝ «Հեթում պատմիչ թաթարաց, յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ ի ձեռն Հ. Մկրտիչ վարդապետի Աւզերեանէ» վերնագրով (Վենետիկ, 1842, երկրորդ տպագրութիւն՝ Վենետիկ, 1951): Երկը թարգմանուել է ոչ թէ բնօրինակից, այլ լատիներէն թարգմանութիւններից մէկից, քանի որ սոյն հրատարակութեան վերնագրից ելնելով է, որ Հեթում Կոռիկոսցուն կոչել են նաեւ Հեթում Պատմիչ, երբեմն՝ «Հեթում պատմիչ թաթարաց», իսկ բուն երկը՝ «Պատմութիւն թաթարաց», որը ծագում է

2 Հեթում Կոռիկոսցու պատմութիւնը Փարիզում առաջին անգամ տպագրուել է 1510 թ., այնուհետև՝ 1517, 1529 և 1735 թթ., իսկ համեմատական բնագիրը ֆրանսիական ակադեմիան հրատարակել է 1906 թ. (RHC Arm. II Recueil des historiens des croisades, documents latins et francais, relative a l'Arménie, Paris, 1906, p. 110-254), վերահրատարակուել է 2002 թ.: Լատիներէնով տպագրուել է 1529, 1532, 1555, 1585, 1671 թթ.: ԺՁ. դարում հրատարակութիւններ են եղել բազմաթիւ այլ եւրոպական լեզուներով, մասնատրապէս՝ գերմաներէնով (1534-ին Ստրասբուրգում), իտալերէնով (1535, 1559 և 1562-ին), իսպաներէնով (1595-ին Կորդոբայում), հոլանդերէնով (1563-ին, 1664-ին և ևս 2 անգամ ԺԷ. դարի վերջին): Տպագրուել է նաև անգլերէնով (Լոնդոնում 1520 թ.): Լատիներէնից ռուսերէն է. Գորելովի ուսումնասիրութեամբ ու ծանօթագրութիւններով թարգմանուել է տպագրուել է 2006 թ. Սանկտ-Պետերբուրգում:

1 Լ. Դալլաքեան, Հեթում Պատմիչ Կոռիկոսցու «Ծաղիկ պատմութեանց Արեւելից աշխարհի» երկասիրութիւնը, «Էջմիածին», 2016, Ձ, էջ 84: Կոռիկոսցու երկի մասին տե՛ս նաև Գ. Զարբախեան, Պատմութիւն Հայերէն դարձման, Բ., Վենետիկ, 1878, Ֆ. Ֆէլտի, Հեթում Պատմիչ հեղինակ «Ծաղիկ պատմութեանց Արեւելեան աշխարհի» գրքին, Փարիզ, 1939, С. М. Мильный, «La flor des estoires de terres d'Orient» Gaitona как историко-географический источник по Востоку и по истории монголов, «Вопросы востоковедения», 1956, т. V, Claude Mutafian, Hethom de Korykos historien arménien un prince cosmopolite a l'aube du XIVe siècle, Cahiers de recherche médiévales, No. 1, Orleans, 1996, pp. 157-174, Կ. Մաթևուսեան, Հեթում Պատմիչ Կոռիկոսցուն և նրա ժամանակագրութիւնը, Երևան, 2011, և այլն:

այս երկրի՝ Եւրոպայում տարածուած փոփոխուած անուանումից՝ «L'Histoire merveilleuse du grand Empereur de Tartarie nommé le grand Can»:

Հ. Մ. Աւգերեանի թարգմանութեան եւ Ֆրանսերէն բնագրի որոշ մասերի անհամապատասխանութեանը մեզանից առաջ անդրադարձել են նաեւ այլ ուսումնասիրողներ: Գ. Միքայէլեանն իր «Կիլիկիայի հայկական պետութեան պատմութիւն» աշխատութեան մէջ, խօսելով Հեթում Ա. թագաւորի եւ Մանգու խանի երկխօսութեան մասին, նշում է, որ լատիներէն տեքստը նոյնական է Ֆրանսերէն տեքստին, իսկ լատիներէնից արուած գրաբար թարգմանութիւնը խիստ տարբերում է բնօրինակից³: Հ. Մ. Աւգերեանի թարգմանութեանն աւելի հանգամանօրէն անդրադարձել է Ա. Ս. Ազիզեանն իր «Հատուածներ Հեթում Պատմիչի «Արեւելքի երկրների պատմութեան ծաղկաքաղի»-ից» յօդուածում՝ ներկայացնելով նաեւ գրաբար թարգմանութիւնից բացակայող հատուածների մի ընտրանի⁴:

Հ. Մ. Աւգերեանը շատ ազատ է մօտեցել երկրի թարգմանութեանը՝ սկսած վերնագրից մինչեւ գլուխների բաժանում: Նա երկը վերնագրել է «Պատմութիւն թաթարաց»՝ հիմնուելով այս երկի Եւրոպայում աւելի ուշ տարածուած մէկ այլ անուանումի վրայ՝ «L'Histoire merveilleuse du grand Empereur de Tartarie nomme le grand Can»⁵: Սակայն թաթարների պատմութեան մասին Հեթումը խօսում է իր երկի միայն 3-րդ գրքում: Աշխատանքի հիմնական եւ իր նշանակութեամբ արժէքաւոր

մասը կազմում է երկի 4-րդ գիրքը, որը նաչակրաց աշրաւանքի ռազմաքաղաքական ծրագիր է: Այն, սակայն, Հ. Մ. Աւգերեանի թարգմանութեան մէջ ընդհանրապէս բացակայում է: Հ. Մ. Աւգերեանի թարգմանութիւնում այս երկի չորս գրքերը տարանջատուած չեն, մինչդեռ ֆրանսերէն բնագրում իւրաքանչիւր գրքի սկզբում ներկայացւում է գրքի կարճ բովանդակութիւնը: Օրինակ՝

Գիրք II

«Գիրքը վերաբերում է Ասիայի կայսրերին: Քանի որ մենք արդէն անդրադարձել ենք Ասիայի տասնչորս թագաւորութիւններին, այժմ կը խօսենք այն կայսրերի մասին, որոնք կառավարում էին Ասիայում Յիսուս Քրիստոսի ծննդից յետոյ, ինչպէս որ այդ մասին պատմում են Արեւելքի պատմիչները (այս եւ յաջորդ հատուածների աշխարհաբար թարգմանութիւնը մերն է – Լ. Գ.):

Հայկական թագաւորութեան մասին խօսելու երկի ֆրանսերէն բնագրում նշում է, որ Հայոց աշխարհում կան երեք թագաւորութիւններ, իսկ լատիներէն ձեռագրում, ինչպէս եւ Հ. Մ. Աւգերեանի թարգմանութեան մէջ, տեսնում ենք, որ «յաշխարհին Հայոց եւ թագաւորութիւնը չորք»⁶:

Երկրորդ գիրքը Ֆրանսերէն բնագրում բաղկացած է 9 գլխից՝ գլուխ I «Ասիայի առաջին կայսրը», գլուխ II «Սարակինոսները եւ Մուհամեդի հաւատը», գլուխ III «Քրիստոնեայ յոյները եւ Պարսկաստանի, Քաղղէացիների եւ Միջագետքի թագաւորութիւնների նուաճումը սարակինոսների կողմից», գլուխ IV «Առաջին թագաւորը, որն ընտրուեց սարակինոսների կողմից եւ դարձաւ սուլթան», գլուխ V «Սարակինոսների ապստամբութիւնը իրենց տիրակալ սուլթանի դէմ», գլուխ VI «Թուրքմէնները ընտրում են թագաւոր, որին Քաղղազի խալիֆը կարգում է Թուրքմէնների տիրակալ», գլուխ VII «Մե-

6 Տե՛ս Մ. Աւգերեան, նշ. աշխ., էջ 13:

3 Գ. Միքայէլեան, Կիլիկիայի հայկական պետութեան պատմություն, Երևան, 2007, էջ 316-319:
4 Ա. Ս. Ազիզեան, Հատուածներ Հեթում Պատմիչի «Արեւելքի երկրների պատմութեան ծաղկաքաղի»-ից, - Բանբեր Երևանի համալսարանի, 2003, թիւ 3 (111), էջ 99-105:
5 Jean le Long, L'Histoire merveilleuse du grand Empereur de Tartarie nommé le grand Can, Paris, 1529.

լիք շահը դառնում է Թուրքաց երկրի շահ, այն ժամանակ, երբ Գողթրուան անցնում էր ծովը», գլուխ VIII «Գողթրուան եւ խաչակրաց արշաւանքի միւս մասնակիցները պաշարեցին Անտիոքը», գլուխ IX «Խորեզմացիները նուաճում են Փոքր Ասիան որտեղից որ փոքր անց վճռուում են»:

Մինչդեռ Հ. Մ. Աւգերեանի գրաբար թարգմանութեան մէջ այս գիրքը ներկայացուած է միայն «Յաղազս տէրութեան Սարակինոսաց» վերնագրի տակ⁷: Բնագրում պարսից խոսքով թագաւորի նուաճումների մասին հատուածում ասւում է, որ խոսքովը տէր դարձաւ Պարսից, Մարաց, Քաղղէացիների թագաւորութիւններին, իսկ Հ. Մ. Աւգերեանի մօտ ի թիւս թուարկուած թագաւորութիւնների նշում է նաեւ Հայոց թագաւորութիւնը⁸:

Ներկայացնենք թուական անհամապատասխանութիւնները, որոնք տեղ են գտել 2-րդ գրքում: Երկրորդ գլխում սարակինոսների՝ դէպի Սիրիա տարածուելու թուական է նշուում 632-ը, լատիներէնում՝ նոյնպէս, մինչդեռ Հ. Մ. Աւգերեանի թարգմանութեան մէջ՝ 622 է: Մարաղայի ճակատամարտը բնագրում նշուում է 633 թ.⁹ Մ. Աւգերեանի մօտ՝ 632 թ.⁹:

Այժմ մի քանի դիտարկում կատարենք երրորդ գրքի մասին: Այն բաղկացած է 49 գլխից, իսկ Հ. Մ. Աւգերեանի թարգմանութեան մէջ բազմաթիւ հատուածներ կրճատուել են եւ միացուել են գլուխները: Օրինակ՝ 1-5-րդ գլուխները ներկայացուած են «Յաղազս աշխարհին՝ ուր յառաջագոյն բնակէին թաթարք» վերնագրի տակ¹⁰: Թարգմանիչը ոչ միայն կառուցուածքային փոփոխութիւնների է ենթարկել տեքստը, այլեւ կատարել է աւելացումներ. օրինակ՝ 3-րդ գրքի առաջին գլխում Չինգիզ խանի

7 Տե՛ս Անյն տեղում, էջ 21:
8 Տե՛ս Անյն տեղում:
9 Տե՛ս Անյն տեղում, էջ 22:
10 Տե՛ս Անյն տեղում, էջ 31:

մասին ֆրանսերէն եւ լատիներէն ձեռագրերում գրուած է «աղքատ ծերունի դարբին, Չինգիզ անուանով», այնինչ գրաբարում կարդում ենք՝ «ծեր ոմն աղքատ՝ շինող փոսից»¹¹: Բնագրի 2-րդ գլխում կարդում ենք. «Պէտք է զարմանալ իրենց տիրակալի այս կերպ պատուելու արարողութիւնից, քանի որ այդ ժամանակ թաթարները չունէին աւելի բարձրարժէք գործուածք, որի վրայ կը նստեցնէին իրենց առաջնորդին, սակայն պէտք է զարմանալ այն փաստից, որ մինչ այսօր թաթարները չեն դաւաճանել այս սովորութեանը, չնայած, որ գրաւել են բազմաթիւ հարուստ թագաւորութիւններ» (Hayton, p. 149): Հ. Մ. Աւգերեանի մօտ կարդում ենք. «Այլ վասն ներկայ ժամանակիս կարող է ոք զարմանալ, զի յորժամ նոյն Թաթարք զբազում թագաւորութիւնս ստացան եւ զանբաւ մեծութիւնս, իբր զի ի ձեռին ունին զտէրութիւն Ասիոյ եւ զճոխութիւն, եւ մինչեւ ի սահմանս Հունգարաց են տիրեալ...»¹²: 9-րդ գլխում Հեթում Պատմիչը, խօսելով Ուխաղայի արշաւանքների մասին, նշում է, որ նա ուղարկեց մի քաջ եւ իմաստուն հրամանատարի՝ Սեբեսաբադա¹³ անուանով, տալով 10.000 զօրք, հրամայելով մտնել Ասիա եւ տեսնել երկրի վիճակը: Հ. Մ. Աւգերեանը իր թարգմանութեան մէջ ոչ միայն չի նշում հրամանատարի անունը, այլեւ գրում է, որ արշաւանքն աւարտուել է անյաջողութեամբ: Այնինչ թաթարներն արշաւանքի սկզբում յաջողութիւններ են գրանցել եւ անյաջողութիւն կրել միայն էրզրում քաղաքի մօտ: Հ. Մ. Աւգերեանի թարգմանութիւնից դուրս է մնացել նաեւ Կոտմանի ճակատամարտի նկարագրութիւնը, որը Հեթում Պատմիչը շփոթութեամբ անուանել է Մու-

11 Տե՛ս Անյն տեղում:
12 Մ. Աւգերեան, նշ. աշխ., էջ 32:
13 Ֆրանսերէն բնագրում՝ Sebesabada (էջ 155), լատիներէնում՝ Cebesada (էջ 290), գրաբարում՝ Պայտոն (էջ 38):

ղանի ճակատամարտ¹⁴: Հ. Մ. Աւգերեանի թարգմանութիւնում բացակայում է նաեւ 10-րդ գլուխը, որտեղ Հեթում Պատմիչը, շարունակելով 9-րդ գլխի նիւթը, պատմում է Ուխաղայի Հետագայ նուաճումների եւ որդիներին տրուած յանձնարարականների մասին: Ահա այն.

Գլուխ X

Ուխաղայ խանն իր երեք զաւակներին ուղարկում է աշխարհի երեք կողմերը՝ իր տիրապետութիւնը մեծացնելու նպատակով

«Երբ որ Ուխաղայ խանը տեղեկացաւ Ասիայի իրադրութեանը, նա մտածեց, որ ոչ մի իշխան չի կարող ոտք մեկնել իր հետ: Կանչեց իր երեք որդիներին, նրանցից իւրաքանչիւրին տուեց մեծ գումար, մեծ թուով զօրականներ, յետոյ հրամայեց գնալ Ասիա՝ նուաճելու երկրներ եւ գաւառներ: Իր Ջոթի¹⁵ որդուն հրամայեց գնալ արեւելեան շրջաններ, մինչեւ Փիսուն գետը, Երկրորդ որդուն, որի անունն էր Բաթու¹⁶, հրամայեց ուղևորուել դէպի հիւսիս, երրորդ որդուն՝ Ջագաթայ անունով, հրամայեց արշաւել դէպի հարաւ: Այսպէս նա միմեանցից բաժանեց զաւակներին՝ ուղարկելով վերջիններիս գաւառներ եւ երկրներ գրաւելու:

Այնուհետեւ Ուխաղայն իր բանակը տեղաբաշխեց երկրի տարածքով մէկ՝ հասցնելով այն մինչեւ Խաթայի թագաւորութիւն, միւս կողմից մինչեւ Տարսա: Այս տարածաշրջանում թաթարները սկսեցին օգտագործել մի այբուբեն, որը նրանք նախկինում չուէին եւ քանի որ այս տարածքի բնակիչները կուսապաշտ էին, թաթարները եւս սկսեցին պաշտել կուրքերի՝

չդադարելով յայտարարել, որ Ամմահ Աստուածն անլի մեծ էր քան միւսները»¹⁸:

Խօսելով Քուբիլայ խանի կառավարման շրջանի մասին՝ Հ. Մ. Աւգերեանը մոռանում է նշել, որ նա թաթարների 6-րդ ինքնակալն էր¹⁹: XX գլխում Ֆրանսերէն եւ լատիներէն ձեռագրերում Հայկ պի գրաման տարեթիւ է նշուում 1260 թ.²⁰, իսկ Հ. Մ. Աւգերեանի մօտ՝ 1250²¹: XXII գլուխում, խօսելով Կիտբոխա զօրավարի մասին, Հ. Մ. Աւգերեանը մոռանում է նշել, որ Հուլաուեն նրա հրամանատարութեան տակ է թողել 10.000 թաթար՝ քրիստոնեաներին Երուսաղէմը վերադարձնելու համար²²: XXXIX գլխում Ղազանի Հոմ քաղաքի մօտ սուլթանի զօրքերի դէմ տարած յաղթանակի տարեթիւ Ֆրանսերէն եւ լատիներէն ձեռագրերում նշուում է 1301 թ., մինչդեռ Հ. Մ. Աւգերեանի թարգմանութեան մէջ կարդում ենք «...այն է յամի տեառն 1310 յաւուր չորեքշաբաթի նախ քան զտօն ծննդեան»²³: Թուական անհամապատասխանութիւնները շարունակուում են նաեւ յաջորդ Վ գլխում. Եգիպտոսի սուլթանի զօրքերին հետապնդելու մասին Ֆրանսերէն բնագրում նշուում է. «Այնուհետեւ Ղազանը հրամայեց Հայոց թագաւորին եւ իր իշխաններից մէկին՝ Մուլայի անունով, 40.000 թաթարներով հետապնդել սուլթանին մինչեւ Եգիպտոսի անապատ»²⁴, իսկ զրաբար թարգմանութեան մէջ կարդում ենք. «յետ այսորիկ պատուէր ետ Ղազան արքային Հայոց, եւ Մուլայի զօրավարին թաթարաց, զի մետասան հազար հեծելազօրու զհետ պնդեսցին սուլթանին Եգիպտոսի...»²⁵: Նոյն գլխի վերջում Ֆրանսերէն եւ

14 Hayton, p. 156.
15 Ֆրանսերէն բնագրում՝ Jochi (էջ 157), ֆրանսերէնում՝ Djotchi (էջ 831), գրաբարում՝ Ժոխի (էջ 40):
16 Ֆրանսերէն բնագրում՝ Bato (էջ 157), լատիներէնում՝ Batho (էջ 291), ֆրանսերէնում՝ Batu (էջ 831), գրաբարում՝ Պայտուն (էջ 40):
17 Իրականում Ջոխիսն և Ջագաթայը Չինգիզի զաւակներն են, իսկ Բաթուն Ջոխիի զաւակն է:

18 Hayton, p. 157.
19 Hayton, p. 160.
20 Hayton, p. 171.
21 Հ. Մ. Աւգերեան, Աշ. աշխ., էջ 47:
22 Hayton, p. 172.
23 Հ. Մ. Աւգերեան, Աշ. աշխ., էջ 61:
24 Hayton, p. 194.
25 Հ. Մ. Աւգերեան, Աշ. աշխ., էջ 62:

լատիներէն ձեռագրում կարդում ենք. «Լիներով իր ժամանակակիցը՝ ես ցանկանում եմ նրա մասին խօսել անելի մանրամասնորէն, քանի որ սուլթանը, որին վերջինս յաղթել է, դեռեւս կենդանի է, իսկ նրանք, ովքեր ծրագրում են նոր խաչակրաց արշաւանք սկսել, կարող են այս պատմութեան մէջ լաւ օրինակներ գտնել»²⁶: Հ. Մ. Աւգերեանի թարգմանութեան մէջ այս հատուածը բացակայում է:

XLII գլխում Ղազանի հիւանդութեան եւ Սուրբ երկրի ազատագրումը յետաձգելու տարեթիւ Ֆրանսերէն եւ լատիներէն բնագրում նշուած է 1301 թ., այնինչ Հ. Մ. Աւգերեանի մօտ՝ 1350 թ.²⁷: XLII գլխում Ֆրանսերէն եւ լատիներէն ձեռագրում կարդում ենք. «Ղազանին շատ է զայրացնում սուրբ երկրի հետ կապուած բոլոր այս ուշացումները: Նա հրամայում է Քուլթուդչաչին եւ 40.000 թաթարներին մտնել Սիրիա, գրաւել Դամասկոսը եւ սրի մատնել տղամարդկանց ու կանանց, աւերել ամէն ինչ մինչեւ Հոմ քաղաքը»²⁸, իսկ թարգմանութեան մէջ՝ «նմին իրի Ղազան դարձ արարեալ ի տեղի իւր, եթող ի ձեռս Գոթիլուզայ զօրավարի մետասան հազար թաթարս»²⁹:

Քանի որ Հ. Մ. Աւգերեանի թարգմանութիւնը կատարուել է ոչ թէ բնօրինակից, այլ լատիներէն թարգմանութիւնից, բնական է, որ այն հատուածները, որոնք բացակայում են լատիներէն թարգմանութեան մէջ, տեղ չեն գտել նաեւ Հ. Մ. Աւգերեանի «Պատմութիւն թաթարաց» աշխատութիւնում: Լատիներէնով այս հատուածի բացակայութիւնը, մեր կարծիքով, կարող է պայմանաւորուել նաեւ այս գլխի բովանդակութեամբ: Քանի որ երրորդ գրքի 44-րդ գլուխը պատմում է Լեւոն II-ի

26 Hayton, p. 194.
27 Հ. Մ. Աւգերեան, Աշ. աշխ., էջ 64:
28 Hayton, p. 200.
29 Հ. Մ. Աւգերեան, Աշ. աշխ., էջ 65:

մահից յետոյ Կիլիկեան Հայաստանում տեղի ունեցող դաժակալական կոիւնների, ներքին խժոժութիւնների, թագաւորութեան ներսում տիրող պառակտումների, Հեթում II-ի կառավարման շրջանի եւ Եգիպտոսի Լաջին թագաւորի յարձակումների մասին, հաւանաբար Հեթում Կոռիկոսցին չի ցանկացել Հոմի պապին ներկայացնել Կիլիկիայում այդ ժամանակ առաջացած ներքին խնդիրները եւ խմբագրել է այս գլուխը՝ լատիներէն թարգմանութիւնից հեռացնելով մի շարք հատուածներ (սա միայն մեր կարծիքն է. կարող են լինել նաեւ այլ վարկածներ): Այս գլխի հատուածները բացակայում են ոչ միայն լատիներէն, այլեւ Ֆրանսերէն բնօրինակից արուած Ֆրանսերէն թարգմանութեան մէջ³⁰: Բնօրինակում այս հատուածը շատ վատ է պահպանուած, տեղտեղ բացակայում են մի շարք տողեր: Այնուամենայնիւ, ի մի բերելով, փորձել ենք ձեռք ներկայացնել:

Գլուխ XLIV

Հայոց թագաւորի վերադարձը

Հայոց թագաւորը վերադարձաւ իր երկիր, սակայն չկարողացաւ հանգստանալ, քանի որ հէնց այդ տարի սուլթանը համարեալ թէ ամէն ամիս զինուորներ էր ուղարկում ասպատակելու Հայոց հողերը, որոնք թալանում եւ ամայացնում էին ամէն ինչ, յատկապէս դաշտավայրերը՝ թագաւորութիւնը հասցնելով վատթար վիճակի:

Մեր տիրոջ 1289 թ. մահացաւ Հայոց թագաւոր Լեւոնը, ով ուներ ութ որդի եւ երեք դուստր՝ Հեթում, Թորոս, Սմբատ, Կոստանդին, Ներսէս, Օշին, Ռուբէն, Ալիմախ, Ջաբէլ, Ռիտա եւ Թեֆանօ: Լեւոնի առաջին որդին, որ կոչւում էր Հեթում, ինչպէս իրաւունքն ու բաժանութիւնն են պահանջում, յաջորդեց իր հորն ու տիրեց թագաւորութեանը, եւ իր բոլոր մարդիկ երդուեցին ու հնազանդութիւն յայտնե-

30 Christiane Deluz, *La fleur des Histoires*, p. 855.

ցին նրան՝ որպէս իրենց տիրոջ: Բոլոր եղբայրները, հարազատները Հեթումին խորհուրդ էին տալիս ամուսնանալ, զաւակներ ունենալ, որ կարողանայ լուծել զահաժառանգութեան հարցը, բայց Հեթումը չի լսում նրանց խորհուրդը, այլ հակառակը՝ ցանկանում է դառնալ կրօնատուր: Նա հաւաքեց իր բոլոր իշխաններին ու կաթողիկոսին և նրանց ներկայութեամբ հրաժարուեց պարտութիւնից և ապա պահանջեց, որ նրանք հաւատարմութիւն յայտնեն ու երդում տան իր եղբայր Թորոսին: Նա հագաւ կրօնատուրի զգեստ և իրեն անուանեց եղբայր Յովհաննէս: Կարճ ժամանակ անց նա իր եղբայր Թորոսի հետ, իշխանութիւնը պահ տալով միւս եղբայր Սմբատին, անցաւ Կ. Պոլիս՝ մասնակցելու իրենց քրոջ և կայսեր որդու հարսանեկան արարողութեանը: Օգտուելով եղբայրների բացակայութիւնից՝ Սմբատը իշխանների ժողով հրահարեց և իրեն հռչակեց թագաւոր: Որպէսզի օրինական լինի իր կառավարումը, նա ընծաներով գնաց Ղազանի մօտ և, ամուսնանալով նրա ազգականուհու հետ, վերադարձաւ Կիլիկիա: Հեթումը և Թորոսը, սա իմանալով, ճանապարհ ընկան դէպի Իլ-խանների արքունիք, սակայն Կեսարիայի մօտ հանդիպելով Սմբատին՝ երկուսն էլ ձերբակալուեցին: Այս լուրը լսելով՝ Սմբատի դէմ դուրս եկաւ նրանց չորրորդ եղբայր Կոստանդինը: Սմբատը, լսելով անգ իշխանների խորհուրդները, զահից չզրկուելու համար բանտում սպանել տուեց Թորոսին, իսկ եղբայր Յովհաննէս (Հեթում II) հրամայեց կուրացնել: Կոստանդինը հաւաքեց իր կողմնակիցներին և զօրքը ուղղեց Սմբատի և նրա շուրջը համախմբուած իշխանների դէմ: Երբ նա տեղ հասաւ և իմացաւ իր եղբայրներ Թորոսի մահուան և Հեթումի կուրացման մասին, շատ մեծ ցաւ ապրեց: Կոստանդինը, յաղթանակ տանելով Սմբատի դէմ, ձերբակալեց վերջինին և ազատ արձակեց Հեթումին: Վերջինս, պատճառ բերելով, որ մի աչքը կոյր է, նորից հրաժարուեց թագաւորութիւնից և դառնալով կրօնատուր՝ արքունիքում մեծ ժողով հրահարեց, և աշխարհիկ ու հոգեւոր գործիչների միասնական կամքով թագաւոր և տէր ընտրե-

ցին Թորոսի որդուն, որի անունն էր Լեւոն: Եւ բոլորը երդում տուեցին ու հնազանդութիւն յայտնեցին նրան՝ որպէս իրենց օրինական տիրոջ, դատելով, որ նա օրինական ժառանգորդ էր, քանի որ նրա հայրը՝ պարոն Թորոսը նախկինում թագաւորութեան կառավարիչն էր եղել և բոլորը նրան նախկինում հաւատարմութեան երդում էին տուել: Սակայն Լեւոնի անչափահասութեան պատճառով որոշուեց, որ պարոն Կոստանդինը՝ նրա հօրեղբայրը, կը ստանձնի նրա խնամակալութիւնը, մինչեւ որ Լեւոն թագաւորը հասնի կատարեալ տարիքի: Այնուհետեւ պարոն Կոստանդինը ներեց բոլոր նրանց, ովքեր մահուան էին դատապարտուել: *(Այստեղ բացակայում է երեք տող):*

Լեւոն մանկահասակ թագաւորի առաջին տարիներին Կիլիկիան ենթարկեց արաբականների ատերիչ յարձակումներին. նրանք աւիրեցին Դաշտային Կիլիկիայի քաղաքները, այրեցին դաշտերն ու անտառները, կոտորեցին բազմաթիւ մարդկանց: Եւ Կոստանդինը ստիպուած եղաւ շատ ծանր պայմաններով պայմանագիր կնքել արաբականների հետ՝ զիջելով բազմաթիւ քաղաքներ և բերդեր: Հեթում II-ը, չհանդուրժելով, որ իշխանութիւնն անցել է Կոստանդինին, ապաքինուելուց և տեսողութիւնը վերականգնուելուց յետոյ, համաձայն չիղնելով Կոստանդինի վարած քաղաքականութեան հետ, զօրք հաւաքելով, զիջելային յանկարծակի յարձակումով ներխուժեց Կոստանդինի սենեակը, որտեղ նա քնած էր և յանկարծակիի բերելով՝ ձերբակալեց նրան ու նետեց գնդանը: Վերջինին կողմնակիցները փորձեցին դիմադրութիւն ցոյց տալ, բայց սպարդիւն. Հեթումը շախչախեց նրանց և կոտորեց բազմաթիւ իշխանների: Ձերբակալուելուց յետոյ նա Կոստանդինին և միւս եղբայր Սմբատին արտրեց Կ. Պոլիս՝ խնդրելով կայսրին նրանց պահել հսկողութեան ներքոյ և թոյլ չտալ երբեք վերադառնալ Կիլիկիա:

Այդ ժամանակ քայքայուել էր երկրի տնտեսութիւնը, երկրում սով էր սկսուել, բայց ամենագոր Աստուած ողորմած է, և այդ ժամանակ մահացաւ Եգիպտոսի թագաւոր Լաշի-

նը, և երբ նոր սուլթանը զօրք հաւաքեց և արշաւեց դէպի Կիլիկիա, մահացաւ Ղազանը և հայոց արքան մնաց միայնակ՝ դիմակայելու սարակիճանների սապատակութիւններին: *(Այստեղ բացակայում է տասը տող):*

Սակայն ամենագոր Աստուած չի լքում նրանց, ովքեր իրեն հաւատում են: Նա խղճաց հայ քրիստոնէայ ժողովրդին: Յուլիս ամսին Եգիպտոսի սուլթանի լաւագոյն 7000 սարակիճաններ մտան հայկական թագաւորութիւն դաշտավայրով՝ աւիրելով և թալանելով ամէն ինչ մինչեւ Տարսոն քաղաքը, որտեղ ծնուել է սուրբ Պօղոսը: Նրանք մեծամեծ վնասներ պատճառեցին: Երբ սարակիճանները արդէն վերադարձի ճանապարհին էին, Հայոց թագաւորը հաւաքեց իր բանակը և դուրս եկաւ սարակիճանների յանդիման. Այսա քաղաքի մօտ ճակատամարտ եղաւ, և Աստուծոյ կամօք թշնամիները պարտութեան մատնուեցին ու 7000 սարակիճաններից սուկ 300-ին յաջողուեց փախչել. մնացեալը զոհուեցին կամ գերուեցին: Իրադարձութիւնը 1305 թ. յուլիսի 18-ին եղաւ: Այս պարտութիւնից յետոյ սարակիճաններն այնչափ չհամարձակուեցին թափանցել հայկական հողեր, իսկ սուլթանը զինադադար կնքեց Հայոց թագաւորի հետ: Իսկ եւ՝ Հեթում եղբայրս, այս երկի հեղինակը, ներկայ էի այս ամէնին: Եւ արդէն երկար ժամանակ որոշել էի վերցնել հոգեւորական աստիճան, վաճառ մտնել, բայց քանի որ Հայոց թագաւորութիւնը այդ ժամանակ բազում դժուարութիւնների մէջ էր, և չէի կարող լքել իմ տէրերին, ազգիս նման վտանգաւոր իրավիճակում՝ առանց պատուագորկ լինելու: Սակայն այն բանից յետոյ, երբ Աստուած ողորմաբար մեզ շնորհեց յաղթանակ թշնամիների դէմ, իսկ ինձ էլ հնարաւորութիւն տուեց թողնելու հայկական թագաւորութիւնը լաւ վիճակում, և ցանկացայ իրականացնել իմ երդումը: Իմ տիրակալ թագաւորից, իմ ազգից և բարեկամներից հեռանալու թոյլտուութիւն խնդրեցի հէնց այդ նոյն դաշտում, որտեղ Աստուած մեծ յաղթանակ էր շնորհել: Ծանապարհ ընկնելով դէպի Կիպրոս, հասնելով Լապալիսի Ս. Աստուածածին վանք, Պրեմնարե-

միաբանութիւն, և հոգեւոր աստիճան ստացալ՝ երկար ժամանակ զինուորական լինելով՝ ցանկացայ մերժել աշխարհիկ արժէքները և ծառայել խոնարհաբար իմ ողջ մնացած կեանքում մեր Տիրոջը: Դա տեղի ունեցաւ 1305 թ.: Փառք և գոհունակութիւն մեր Տիրոջը, Հայոց թագաւորութիւնը շատ լաւ վիճակում է շնորհիւ երիտասարդ Լեւոն թագաւորի³¹ Թորոս իշխանի որդու և վերջինս լի է շնորհներով և առաքինութիւններով: Յուսով եմք, որ այս երիտասարդ թագաւորի օրօք հայկական թագաւորութիւնը կը վերականգնի իր նախնական փառքը, մեծութիւնը Տէր Յիսուս Քրիստոսի օգնութեամբ:

Հ. Մ. Աւգերեանի գրաբար թարգմանութեան վերջին հատուածում 4-րդ գրքի 28 գլուխներից առկայ են միայն 4-ը, այն էլ՝ բազմաթիւ բացթողումներով: Չորրորդ գրքի առաջին գլխում հեղինակը պատմում է, որ պատգամ է ստացել կաթողիկոսների առաջնորդից գրելու բոլոր պատճառները և հնարաւորութիւնները անհաւատներին դէմ խաչակրաց արշաւանք սկսելու համար, մինչդեռ գրաբար թարգմանութեան մէջ՝ իմ. գլխում, մի ամբողջ հատուած բացակայում է: Ստորեւ ներկայացնենք բացակայող հատուածը.

«Եւ ես՝ Հայր Հեթումս, ով պատգամ է ստացել կաթողիկոսների առաջնորդից, կարող եմ անկեղծ ասել, որ քրիստոնէաներն ունեն իրական և հիմնաւոր պատճառ պատերազմ սկսելու սարակիճանների և Մուհամեդի ժառանգների դէմ, քանի որ նրանք գրաւել են նրանց մշակութային ժառանգութիւնը՝ Սուրբ երկիրը, որն աւետուել էր Աստուծոյ կողմից քրիստոնէաներին, պահուած էր նրանց Տէր Յիսուս Քրիստոսի գերեզմանը, ով եւ զրել է քրիստոնէական հաւատամքի հիմքը: Այս անհաւատներն իրենց գործերով մեծ վիրաւո-

31 1307 թ. նոյեմբերի 17-ին Լեւոն թագաւորն իր հօրեղբայր Հեթումի և բազմաթիւ հայ իշխանների հետ դաւադրաբար սպանուեց մոնղոլ զօրաֆրամանատար Բիլադունի ձեռքով:

րանք են հասցրել քրիստոնեաներին եւ արիւն թափել:³² Պատերազմելու համար կան նաեւ շատ պատճառներ, որի թուարկումը շատ ժամանակ է պահանջում:

Երկրորդ կէտով ես ասում եմ, որ ոչ ոք չպիտի վախենայ, քանի որ Հռոմէական Սուրբ եկեղեցին որը ղեկավարում է ողջ աշխարհը, ունի մեծ իշխանութիւն. Աստծոյ զօրութեամբ քրիստոնեայ թագաւորների եւ իշխանների աշակցութեամբ Յիսուս Քրիստոսի հետեւորդները, կրելով խաչ, կ'ազատագրեն Տիրոջ գերեզմանը սարակիստների ձեռքից, ովքեր մեր մեղքերի պատճառով գրաւեցին այն:

Երրորդ եւ չորրորդ հանգամանքը այն է, որ անհրաժեշտ է օգտագործել թշնամու վիճակը, քանի որ պատերազմը սկսելու համար բարենպաստ շրջան է: Ես կը խօսեմ աւելի երկար: Օրինակ, ինչպէս լաւ բժիշկը, որը պէտք է իմանայ հիւանդութեան պատճառները, որն ուզում է բուժել, այնպէս էլ լաւ ղեկավարը պէտք է ուսումնասիրի իրավիճակը, թշնամու մտադրութիւնը, եթէ նա ուզում է սկսել, շարունակել եւ բարեյաջող աւարտին հասցնել իր արշաւանքը: Երբ գործը հասնում է պատերազմին, թշնամիների վերաբերեալ ոչինչ չպիտի թաքցնել լաւ եւ իմաստուն առաջնորդից: Կանխատեսելը երբեք ոչ մի վատ բանի չի յանգեցնի, մինչդեռ կանխատեսուած հանգամանքները ազդում են բանակի մարտունակութեան եւ խիզախութեան վրայ, յատկապէս մարտերում, ուր անկանխատեսելի վտանգները յաղթահարելու ժամանակ չի լինում: Մարտերի ժամանակ է, որ աւելի շատ քան բոլոր միւս գործողութիւններում, չենք կարող սխալներն ուղղել, քանի որ իւրաքանչիւր սխալին հետեւում է պատիժը եւ հատուցումը: Ուստի արշաւն աւելի հասկանալի եւ ստոյգ ներկայացնելու հա-

մար մենք կը խօսենք Եգիպտոսի վիճակի, Կահիրէի զօրքի եւ թշնամիների հզօրութեան մասին»³³:

Նոյն կրճատումները տեսնում ենք նաեւ երկրորդ գլխում, երբ պատմիչը խօսում է Եգիպտոսի թագաւորութեան վիճակի մասին: Ստորեւ ներկայացնենք բացակայող հատուածը.

«...իւրաքանչիւր հեծեալ պէտք է ունենայ 3 ձի եւ մէկ ուղտ: Եթէ սուլթանը տանում է իր զօրքը Եգիպտոսից դուրս, նա կարող է լրացուցիչ վարձատրութիւն տալ, եթէ նա ցանկանայ: Նա բաշխում է իր զօրքին բարոններից մէկի հսկողութեան տակ: Նրանց անուանում են էմիրներ: Նա տալիս է մէկին հարիւր զինուոր, միւսին երկու հարիւր զինուոր, աւել կամ պակաս կախուած է պատուից, որ նա ցանկանում է նրանց տալ: Քանի որ, եթէ սուլթանը դնում է էմիրի վերահսկողութեան տակ հարիւր կամ երկու հարիւր հեծեալ, նրան տալիս է նաեւ գումարը. վերջինս իր մէջ պարունակում է բոլորի հասանելիք ուժիկը, եւ համապատասխանաբար էմիրի հասանելիք գումարը: Կազմակերպական այս ձեւը բարենպաստ չէ սուլթանի համար, քանի որ էմիրները, ովքեր որ պէտք է ապահովեն 100 կամ 200 հեծեալի, գնում են ստրուկներ իրենց գումարով, նրանց տալիս են ձիեր եւ զէնք ու ներկայացնում իբրեւ զինուոր, պատրաստում զէնք բռնելուն եւ ուժիկ ստանում նրանց համար: Մէկ այլ տարբերակ է նաեւ այն, որ նրանք բռնում են քիչ արժէք ունեցող տղամարդկանց, տալիս են նրանց ձիեր եւ զէնք, ստիպում են նրանց ծառայել բանակում, ստանալ իրենց ուժիկը՝ մնացածը պահելով իրենց քսակում: Այսպիսով յանդում ենք այն եզրակացութեան, որ բանակը մեծաթիւ է, բայց լաւ մարտիկները շատ քիչ են»³⁴:

33 Hayton, p. 221.

34 Hayton, p. 222-223.

32 Բառացի թարգմանութիւնը Ռեալեալմ Է. «Այս անհասարակտը անա լրջօրէն վիրատրել են քրիստոնեաներիս և արիւն թափել այդ մեծ վնասի քամար»:

Հինգերորդ գլխում Երուսաղէմի Ամորի թագաւորի՝ Եգիպտոս արշաւելու մասին Ֆրանսերէն բնագրում կարգում ենք. «Մեր թուարկութեան 1253 թուականին Երուսաղէմի թագաւոր Ամորին³⁵ մտադրուեց բանակ հաւաքել Երուսաղէմի ողջ թագաւորութիւնից եւ ներխուժեց Եգիպտոս»³⁶, իսկ գրաբար թարգմանութեան մէջ՝ «...իսկ յամի տեառն 1053 Ամարիկոս արքայ Երուսաղէմի ժողովեալ զքրիստոնեայ զօրս ըստ կարի, եմուտ յերկիրն Եգիպտոսի, եւ տիրեաց բազում քաղաքաց եւ գիւղից»³⁷: Տասներորդ գլխում Եգիպտոսի աշխարհագրական սահմանները ներկայացնելիս Ֆրանսերէն բնագրում նշում է, որ Սիրիայի եւ Եգիպտոսի միջեւ կայ 7 օրուայ ճանապարհ, մինչդեռ գրաբար թարգմանութեան մէջ, որը ներկայացուած է Գլուխ ԾԴ-ում, նշում է 8-օրեայ ճանապարհի մասին³⁸: Ֆրանսերէն բնագրում խօսելով, Նեղոսի վարարման մասին, ասում է, որ երբ վարարումը հասնում է բարձր մակարդակին, մարդիկ թողնում են, և ջրը ջրուր առուակներով եւ ջրանցքներով ոռոգի ամբողջ երկիրը քառասուն օր³⁹, իսկ գրաբար թարգմանութեան մէջ նշում է տասնմէկ օր⁴⁰:

Գրաբար թարգմանութեան տասներորդ գլուխը թերի է, բացակայում է տեքստի զգալի հատուած: Ահա այն. «Սուլթանը մեծ եկամուտներ է ստանում նաւերից, որոնք մուտք են գործում Ալեքսանդրիայի եւ Դամիետի նաւահանգիստներ: Եգիպտոսի հողը հարուստ է շաքարով եւ այլ մթերքով, բայց այստեղ գինու պակաս կայ: Այն գինին, որ այստեղ են ստանում, շատ համեղ է, բուրավէտ,

35 Ֆրանսերէն բնագրում՝ Aumari (էջ 225), լատիներէնում՝ Aumaricus (էջ 344):
36 Hayton, p. 225.
37 Հ. Մ. Ալգերեան, մշ. աշխ., էջ 72:
38 Նոյն տեղում, էջ 75:
39 Hayton, p. 232.
40 Հ. Մ. Ալգերեան, մշ. աշխ., էջ 75:

բայց սարակիստները չեն համարձակուում այն խմել. դա նրանց արգելում է իրենց կրօնը: Նրանք ունեն բաւականաչափ ոչխարի, այծի միս, հաւերի եւ ուրիշ այլ թռչունների միս, սակայն տաւարի միսը քիչ է: Նրանք ուտում են ուղտի միս:

Եգիպտոսի թագաւորութիւնում կան քրիստոնեաներ: Նրանց կոչում են զպտիներ: Նրանք Յակոբիկեաններն են: Նրանք ունեն գեղեցիկ արքայութիւններ, որմեղ ապրում են խաղաղութեան մէջ: Այս զպտիները Եգիպտոսի ամենահին բնակիչներն են, քանի որ սարակիստները սկսեցին այս տարածքում ապրել միայն այն գրաւելուց յետոյ:

Եգիպտացիներին պակասում է երկաթ, փայտ, ստրուկներ, որ ամրացնեն իրենց բանակը եւ նոր երկրներ գաւթեն: Նրանք դրա կարիքը շատ ունեն եւ այս ամէնը կարող են ձեռք բերել ներմուծման միջոցով: Առանց այս ամէնի չեն կարող երկար գիմանալ: Ամբողջ Եգիպտոսի թագաւորութիւնում չկայ ո՛չ քաղաք, ո՛չ մի ամրոց, ո՛չ մի այլ ուրիշ ամրութիւն, բացի Ալեքսանդրիայից, որն ունի ատամնային (պարսպով) ամրութիւն, եւ Կահիրէի միջնաբերդը, որը լաւ ամրացուած չէ: Հէնց այդ միջնաբերդում է գտնուում սուլթանի նստավայրը: Եգիպտոսի ամբողջ տարածքը պաշտպանում է բանակի եւ նրա հեծելազօրի կողմից, եւ երբ նրանց պարտութեան մատնենք կարող ենք առանց մեծ վտանգի գրաւել երկիրը»⁴¹:

Փաստօրէն, գրաբար թարգմանութեան մէջ, բացի թուական եւ փաստական որոշ շփոթմունքներից, որոնց հանդիպեցինք Ֆրանսերէն եւ լատիներէն բնագրի հետ համեմատելիս, կան բազմաթիւ բացթողումներ: Գրաբար թարգմանութեան մէջ բացակայում են հիմնականում բոլոր այն հատուածները, որոնք առնչւում են խաչակրաց նոր արշաւանք սկսելու՝ Հեթում

41 Hayton, p. 233-234.

Պատմիչի կողմից պապին ներկայացուած ծրագրին: Ինչո՞ւ Մ. Աւգերեանը չի թարգմանել այդ հատուածները, ինչո՞ւ է փոխել աշխատութեան վերնագիրը: Այս եւ բազմաթիւ այլ հարցերի պատասխանները կարող ենք հիմնաւորել հետեւեալ վարկածով. 1842 թ., երբ թարգմանում-տպագրում էր Հեթում Կոռիկոսցու այս երկը, Հայաստանի արեւմտեան հատուածը գտնւում էր Օսմանեան Թուրքիայի տիրապետութեան տակ: Այստեղ Հայ ժողովուրդը ենթարկւում էր կրօնական, ազգային, հարկային, քաղաքական ծանր ճնշումների: Նման պայմաններում հեղինակը, գուցէ զգուշանալով թուր-

քերի թշնամանքն աւելի. բորբոքելու վտանգից, աշխատութեան մէջ չի ներառել մահամեղականների դէմ քրիստոնեաների նոր խաչակրաց արշաւանք սկսելու Հայ պատմիչի հարուստ ծրագիրը:

Բնականաբար, այս յղուածում մենք չենք անդրադարձել Հեթում Կոռիկոսցու երկի բնագրի եւ դրաբար թարգմանութեան բոլոր տարբերութիւններին: Բայց, կարծում ենք, վերը շարադրուածն արդէն իսկ բաւարար է՝ ցոյց տալու, որ Հեթում Կոռիկոսցու այս արժէքաւոր երկի հայերէն լրակատար թարգմանութիւնը մեծ կարեւորութիւն ունի հայագիտութեան համար:

ՊԱՐՍԻՑ ԳՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻՆ ՏՐՈՒԱԾ ՏԻՏՂՈՍՆ ՈՒ ՊԱՏՈՒՄՆՈՒՆՆԵՐԸ

Քրիստիտ Կոստիկեան

Մատենադարանի արխիւային հաւաքածուի նմուշները, հիմնականում կապուած լինելով Էջմիածնի կաթողիկոսների գործունէութեան հետ, հնարաւորութիւն են տալիս որոշակի պատկերացում կազմելու դիտարկուող ժամանակահատուածում պարսից գրագրութեան մէջ նրանց տրուած տիտղոսի ու դրա հետ օգտագործուող պատուանունների մասին:

Ժէ.-ԺԹ. դարերի պարսկալեզու աղբիւրներում, այդ թւում նաեւ՝ վաւերագրութեամբ թէ՛ Աղուանից եւ թէ՛ Էջմիածնի կաթողիկոսները, ինչպէս նաեւ խոշոր վանական հաստատութիւնների վանահայրերն ու եպիսկոպոսները, հիմնականում նշուած են խալիֆա տիտղոսով: Այդ տիտղոսով էր մեծցրւում նաեւ Սպահանի հայութեան հոգեւոր առաջնորդը¹:

Խալիֆա (خليفة) եզրոյթը ծագում է արաբերէն «փոխանորդ, տեղապահ» բառից եւ առաջ է եկել Մուհամմադ մարգարէի մահից յետոյ՝ անուանելու համար նրա յաջորդների իշխանութեան իրաւական կարգավիճակը որպէս նախ Աստծոյ առաքեալի փոխանորդի, ապա նաեւ՝ Աստծոյ փոխանորդի: Դեռեւս ԺԳ. դարից խալիֆա անուանումն օգտագործուած էր Հռոմկայում նստող Ամենայն Հայոց կաթողիկոսի վերաբերութեամբ արաբական աղբիւրներում՝ նկատի առնելով նրա Աստծոյ փոխանորդ կամ Քրիստոսի փոխանորդ լինե-

լու հանգամանքը²: Պարսկերէն աղբիւրներում եւս խալիֆա անուանումը հանդէս է գալիս սկսած ԺԳ. դարից՝ առաջին անգամ նշուելով Բուրհան ալ դին Անաւիի «Անֆի ալ դուլուբ» երկում³:

Առայժմ յայտնի առաջին պարսկերէն վաւերագիրը, որում «կաթողիկոս» բառը փոխարինուած է խալիֆա տիտղոսով, 1430 թ. Էջմիածնի կաթողիկոս Գրիգոր Մակուեցու Ամիր Ռուստամ Օրբէլեանից գնած ու վակֆ արուած գիւղերի կալուածագիրն է⁴: ԺԵ. դարի վաւերագրութեամբ Էջմիածնի ու Աղուանից կաթողիկոսներին տրուող խալիֆա տիտղոսի հետ զուգահեռաբար օգտագործուած էին նաեւ մեհրասիա (քրիստոնեայ բարձրաստիճան հոգեւորական - محراسيا)⁵ կամ աղաւաղուած քաթեաքոս - كاتيكوس տարբերակները⁶: Աղուանից կաթո-

1 هاشمی، شکوه السادات اعرابی، ارامنه جلفای نو در عصر صفوی، تهران، سازمان اسناد و کتابخانه ملی جمهوری اسلامی ایران، 1394، سند 2-21، 87 ص. 2-275، 3-351.

- 2 Գ. Դանիէլեան, Հռոմկայի կաթողիկոսական աթոռի պատմութեան արաբական սկզբնաղբիւրները, «Կիլիկեան Հայաստանը սահմանակից պետական միատրոսների ընկալումներում», Երեւան, 2016, էջ 218:
- 3 Գ. Դանիէլեան, Գջ. աշխ., էջ 220, լղում՝ A. Peacock, *An interfaith polemic of Medieval Anatolia, Islam and Christianity in Medieval Anatolia*, ed. By A. C. S. Peacock, Bruno De Nicola and Sara Nur Yildiz, Ashgate, 2015, pp. 233-261:
- 4 Լ. Փափագեան, Մատենադարանի պարսկերէն վաւերագրերը, II, Կալուածագրերը, պրակ Ա, Երեւան, 1968, վաւ. 5, էջ 428:
- 5 Լ. Փափագեան, Մատենադարանի պարսկերէն վաւերագրերը, I, Հրովարտակներ, պրակ Ա, Երեւան, 1956, վաւ. 13, էջ 269:
- 6 Տե՛ս Լ. Փափագեան, Հրովարտակներ, պրակ Ա, վաւ. 3, էջ 248: Ընդ որում՝ այս հրովարտակի բնագրի վրայ լեւոտոյ լեւոտայ շրջանի մի քանի հրամանագրերում եւս «կաթողիկոս» է նշուած (Լ. Փափագեան, Հրովարտակներ, պրակ Բ, Երեւան, 1959 վաւ. 5, 6, նաեւ՝ Բ. Կոստիկեան, Մատենա-